ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԱՐՄԵՆԻ ՄԱՐԱԲՅԱՆ

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (հայոց լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Մ. Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բ. Մ. Եսաջանյան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Վ. Գալստյան

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. մարտի 14-ին՝ ժամը 14^{00}-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. փետրվարի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Ա. Վ. ԱՎԱԳՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Լեզվաբանության և մանկավարժագիտության զարգացման արդի փուլում շատ դրույթների վերանայման պահանջներ են առաջ քաշվում և հարցադրումների այդ համատեքստում անհրաժեշտություն է զգացվում նորովի մոտեցում հանդես բերել լեզվի ուսուցման մեթոդաբանության նկատմամբ:

Հաղորդակցման հիմնական միավորը նախադասությունն է. ուստի սովորողների կապակցված խոսքի գործնական հիմքը պարզ նախադասությունն է իր ուսուցման մեթոդական համակարգով:

Հիմնախնդրի կարևորությունը մենք ընդգծում ենք այն առումով, որ սովորողները հասարակական կյանքում հաճախ հանդիպում են լեզվական սխալների և լեզվական կանոնների խաթարումների, որոնք սփռվում են ինչպես հեռուստաթերից, այնպես էլ մամուլի էջերից: Դրանք վերաբերում են նախադասության անդամների անհամաձայնությանը, սխալ խնդրառությանը, խոսքի տրամաբանական սխալ կառուցվածքին, նախադասության անդամների սխալ շարադասությանը, տրոհվող անդամների ոչ ճիշտ կետադրությանը, դրանց արտաբերական հնչերանգային սխալներին և այլն:

Հետազոտության նպատակն է միջին դպրոցում պարզ նախադասության ուսուցման նորագույն տեխնոլոգիաների բաղադրատարրերի՝ ակտիվ և փոխներգործող մեթոդների, հաղորդակցական և տեղեկատվական միջոցների ու ինքնատիպ մի շարք ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերի կիրառմամբ ցույց տալ՝

- սովորողների կապակցված խոսքի, լեզվական, տրամաբանական և ստեղծագործական մտածողության ձևավորման,
- միջին դպրոցի սովորողների բառապաշարի հարստացման, բանավոր ու գրավոր խոսքի զարգացման արդյունավետ ուղիներն ու միջոցները:

Հետազոտության օբյեկտը հայոց լեզվի շարահյուսության ուսուցման գիտամեթոդական համակարգն է միջին դպրոցում:

Հետազոտության առարկան ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ պարզ նախադասության ուսուցման գործընթացն է միջին դպրոցում:

Հետազոտության գիտական վարկածը այն ենթադրությունն է, որ միջին դպրոցում պարզ նախադասության ուսուցման գործընթացում կապահովվեն սովորողների կապակցված խոսքի զարգացումը և պարզ նախադասության ուսուցման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, եթե՝

- միջին դպրոցականին, ըստ նրա տարիքային, հոգեբանական, անհատական առանձնահատկությունների, ներկայացվեն և խորությամբ ուսումնասիրվեն սովորողների խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման և լեզվական մտածողության ձևավորման ուղղությամբ պարզ նախադասության գործառույթները,
- կրթությանը ներկայացվող նոր ժամանակակից պահանջների ոգով վերակառուցվի միջին դպրոցի սովորողների խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման և ստեղծագործական մտածողության ձևավորման ուսուցման տեխնոլոգիական համակարգը,

- նախադասության և նրա տեսակների, կապակցման եղանակների, գլխավոր ու երկրորդական անդամների ուսուցման միջոցով մշակվեն հաղորդակցումը խթանելու ելակետային դրույթները և բանավոր ու գրավոր խոսքի զարգացման սկզբունքները:

Հետազոտության նպատակով պայմանավորված առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- նորովի բացահայտել միջին դպրոցի սովորողների տարիքային ընդհանուր զարգացման առանձնահատկությունները՝ կապված լեզվի ուսուցման յուրահատկությունների հետ,
- մշակել արդյունավետ ուսուցման պայմաններ, որոնք հնարավոր կդարձնեն պարզ նախադասության թեմայի ուսուցման միջոցով սովորողների բառապաշարի հարստացումը, գրավոր ու բանավոր խոսքի զարգացումը, լեզվական մտածողության ձևավորումը,
- մանկավարժական գիտափորձի միջոցով պարզել, թե՝

ա) ինչպիսին է միջին դպրոցի սովորողների բառապաշարի ծավալը, գրավոր ու բանավոր խոսքի զարգացման մակարդակը, լեզվական մտածողությունների վիճակը,

բ) ինչ փորձ է կուտակել ուսուցիչը պարզ նախադասության թեմայի ուսուցման գծով,

գ) որքանով են կապված սովորողների բառապաշարի հարստացումը, խոսքի զարգացումը և ոճական, արտահայտչական կարողությունների ձևավորումն ուսումնասիրվող հիմնախնդրի հետ:

Հետազոտության մեթոդները.

1. **Էմպիրիկ հետազոտության կամ միջնորդավորված մեթոդներ**, որտեղ ներառել ենք՝

- **անկետավորումը և թեստավորումը**. նպատակը մանկավարժության սուբյեկտների անձնային և մասնագիտական որակների պարզելն է, առարկայական գիտական մակարդակի, կարողությունների, ունակությունների և հմտությունների աստիճանի որոշելը,
- **դիտումը**, որը օգնել է նյութերի հավաքմանը, հետազոտության սուբյեկտի ձևավորման ու զարգացման դինամիկայի բացահայտմանը,
- **զրույցն ու բանավեճը**, որոնք օգնել են բացահայտել հետազոտվող թեմայի գծով սուբյեկտների տեսակետները և գտնել դրանց արդյունավետության բարձրացման ուղիներն ու միջոցները,
- **մանկավարժական գիտափորձը**՝ արձանագրող, հավաստող և ձևավորող տեսակներով:
- 2. **Տեսական վերլուծությունների մեթոդներ**, որոնք ներառում են ժամանակակից տեխնոլոգիաները՝ իրենց բաղադրամասերով, բաղադրատարրերով և բաղադրիչներով:

3. **Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման, ընդօրինակման, տեղայնացման և կիրառման մեթոդներ**, որոնք ցույց են տալիս ուսումնասիրվող թեմայի ուսուցման գծով առկա մանկավարժագիտության նվաճումները և արձանագրած հաջողությունները:

Հետազոտության կազմակերպման ու անցկացման փուլերը: Հետազոտությունն իրականացրել ենք իրար լրացնող և միմյանց օրգանական շարունակություն կազմող փուլերով:

- **Առաջին փուլում** (2007-2008թթ.) որոշակիացրել ենք հետազոտության թեման, ձևակերպել գիտական վարկածը, առանձնացրել խնդիրները, մշակել ենք ատենախոսության գիտական ապարատը, սկսել մասնագիտական գրականության ուսումնասիրությունը:
- **Երկրորդ փուլում** (2008-2009թթ.) մշակել ու անցկացրել ենք մանկավարժական գիտափորձ: Պատրաստել և հրատարակության ենք ներկայացրել թեմային վերաբերող գիտական հոդվածներ:
- **Երրորդ փուլում** (2009-2010թթ.) վերլուծել ու ներդրել ենք գիտափորձի արդյունքները և ուսումնասիրած գրականության հիման վրա շարադրել ենք ատենախոսությունը, լույս ենք ընծայել գիտական հոդված: Իրականացրել ենք հետազոտության փորձաքննությունը:

Հետազոտության գիտական նորույթը.

- Հիմնավորել ենք պարզ նախադասության թեմայի ուսուցման անհրաժեշտությունը, որոշարկել նրա տեղն ու դերը միջին դպրոցի սովորողների բառապաշարի հարստացման, գրավոր ու բանավոր խոսքի զարգացման, տրամաբանական, ստեղծագործական և հայեցի լեզվամտածողության ձևավորման գործում:
- Նորովի մոտեցում ենք հանդես բերել պարզ նախադասության, նրա տեսակների, գլխավոր ու երկրորդական անդամների արժևորման և դրանց ուսուցման նկատմամբ:
- Մշակվել և ներդրվել են պարզ նախադասության ուսուցման տեխնոլոգիական համակարգի նոր բաղադրատարրեր, մեթոդներ և մեթոդական հնարներ:
- Ներկայացրել ենք պարզ նախադասության թեմայի յուրացման արդյունավետությանը նպաստող վարժությունների ինքնատիպ համակարգ:

Հետազոտության տեսական նշանակությունն է՝

- Ելնելով հայ լեզվաբանության տեսական դրույթներից ու սկզբունքներից և մշակված մեթոդաբանությունից (Ա. Ղարիբյան, Ս. Աբրահամյան, Վ. Քոսյան, Ա. Տեր-Գրիգորյան, Լ. Խաչատրյան, Ջ. Գյուլամիրյան...), նորովի մոտեցում ենք ցուցաբերել պարզ նախադասության ուսուցումը սովորողների գրավոր ու բանավոր խոսքի զարգացմանը ծառայեցնելու, նրանց բառապաշարը հարստացնելու հարցերին:
- Մշակել և հետազոտության մեջ արդյունավետ կիրառել ենք միջին դպրոցի սովորողների տրամաբանական, ստեղծագործական, լեզվական մտածողության ձևավորմանը նպաստող մեթոդական հանձնարարականներ, նոր ուղիներ ու միջոցներ և դրանք ներառել ուսուցման տեխնոլոգիական համակարգ:

Հետազոտության գործնական նշանակությունն է՝

- Մեր հավաքած ինչպես տեսական, այնպես էլ մեթոդական բնույթի նյութերն իրենց թարմությամբ կարող են հիմք ծառայել հայոց լեզվի ուսուցիչներին տրվող մեթոդական հանձնարարականների և երաշխավորությունների համար:
- Մշակել ու փորձարկվել է մեթոդական համակարգ, որ կապահովի լեզվամտածողական տարբեր մակարդակներ ունեցող աշակերտների

ընդգրկումը քերականական նյութի ուսումնասիրության գործընթացում:

- Մշակվել ու կիրառվել է պարզ նախադասության թեմայի ուսուցման վարժությունների և առաջադրանքների համակարգ:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորված են՝

- մեր կողմից մշակված ու կիրառված տեխնոլոգիական համակարգի բաղադրամասերի, բաղադրատարրերի և բաղադրիչների արդյունավետությամբ և հուսալիությամբ,
- հետազոտության նպատակի, խնդիրների, գիտական վարկածի, պաշտպանության ներկայացվող դրույթների և եզրակացությունների ներդաշնակությամբ,
- հայեցակարգային դիրքորոշումների մեթոդաբանական հիմնավորվածությամբ,
- գիտափորձի արդյունքների վիճակագրական մշակման ժամանակակից մեթոդների կիրառմամբ,
- գիտափորձի մասնակիցների ընդգրկուն ներկայությամբ, հիմնավորումով ու եզրակացություններով,

Պաշտպանության ենք ներկայացնում հայեցակարգային հետևյալ դրույթները.

- Պարզ նախադասության ուսուցումը միջին դպրոցում, և նրա օգնությամբ սովորողների ստեղծագործական, տրամաբանական, լեզվական մտածողությունը, ինչպես նաև բառապաշարի հարստացումն ու խոսքի զարգացումը կարևոր նշականություն են ստանում մեր կողմից մշակված ու ներդրած ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ:
- Ուսուցման չափորոշիչներով նախատեսված գիտելիքների աստիճանական անցումը սովորողների կարողությունների և հմտությունների ոլորտ հնարավոր է դառնում մտածողության և սովորողների խոսքի զարգացման միջոցով, որի հիմքը պարզ նախադասության ուսուցումն է:
- Ինտերակտիվ ուսուցման մեթոդների՝ դերային խաղերի, բեմականացումների, մտագրոհների, բանավեճերի, հարց ու պատասխանի, անհատական մոտեցումների, խմբային քննարկումների, ինչպես նաև ուսուցման գործընթացում մանկավարժության սուբյեկտների համագործակցության և հաղորդակցության ապահովումը հնարավորություն կտան սովորողին ձեռք բերելու կապակցված ու պատկերավոր խոսք կառուցելու կարողություններ, ունակություններ և հմտություններ:

Հետազոտության փորձաքննությունը:

«Պարզ նախադասության ուսուցման հիմնախնդիրները միջին դպրոցում» թեմայով ատենախոսության փորձաքննությունն իրականացվել է՝

- Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի և ընդհանուր մանկավարժության ամբիոնների համատեղ նիստում:

- Վանաձորի Հովի. Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտի գիտական նստաշրջաններում կարդացած գիտական զեկուցումներով,
- Վանաձորի թիվ 1, 2, 3, 6, 18, 19, 22 դպրոցներում անցկացրած գիտափորձերով,
- հետազոտության թեման ամփոփող գիտական հոդվածներով,
- հետազոտության թեման ամրապնդող վարժությունների համակարգով:

Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Այն կազմում է համակարգչային 192 էջ և ունի երեք գծապատկեր, 1 աղյուսակ, 20 գծագիր և 1 գրաֆիկ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***ներածության*** մեջ հիմնավորվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, տրվում են օբյեկտն ու առարկան, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքը, ներկայացվում են հետազոտության գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունները, ցույց են տրվում հետազոտության անցկացման փուլերը, կիրառված մեթոդները և պաշտպանության ներկայացված հայեցակարգային դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ ***«Հետազոտության գիտատեսական և մեթոդական հիմունքները»*** բաղկացած է երեք ենթագլխից:

1.1.*«Պարզ նախադասության և նրա ուսուցման ըմբռնումը լեզվաբանական գրականության մեջ»* ենթագլուխը նվիրված է հայերենի քերականական ու մեթոդական աշխատություններում խնդրո առարկայի վերաբերյալ եղած տեսակետներին: Հետևողական քննության ընթացքում կատարվել են հետևյալ եզրակացությունները.

1. Շատ հետազոտողներ զբաղվել են միայն խոսքի մասերի համաձայնության հարցերով՝ չունենալով նախադասության կառուցվածքի և նրա անդամների փոխհարաբերության վերաբերյալ հստակ և տարբերակված ըմբռնում (Հովի. Կոստանդնուպոլսեցի, Ս.Ջուղայեցի, Մ.Սեբաստացի, Պ.Դպիր, Մ.Չամչյան, Վրթ.Չալըխյան, Ստ.Մալխասյանց, Ա.Այտընյան):
2. Նախադասությունը համարելով շարահյուսության, ինչպես նաև վերջինիս ուսուցման հիմքը՝ նրանում գլխավոր դերը վերապահել են բային, այն է՝ ստորոգյալին (Մ. Աբեղյան, Մ. Ասատրյան, Տ. Շահբազյան, Ս. Գյուլբուդաղյան):
3. Քննարկել են ինչպես նախադասության տեսակները, այնպես էլ ընդհանրապես պարզ նախադասությանն առնչվող բոլոր թեմաները (Գ. Սևակ, Վ. Առաքելյան, Մ. Ասատրյան, Ս. Աբրահամյան, Ռ. Իշխանյան, Ա. Պապոյան, Խ. Բադիկյան, Ֆ. Խլղաթյան և ուրիշներ):

4. Կատարել են նախադասության գլխավոր և երկրորդական անդամների քննություն՝ հատկապես կարևորելով ենթական, բայը և նրա խնդիրները (Մ. Տեր-Հարությունյան, Մ. Չամչյան, Գ. Ավետիքյան, Վրթ. Չալըխյան, Ա. Բագրատունի, Ա. Այտընյան):
5. Գաղափար են տվել հատկացուցիչ-հատկացյալի, բացահայտիչ-բացահայտյալի մասին՝ շատ հաճախ չունենալով որոշչի ըմբռնումը (Մ. Տեր-Հարությունյան, Մ. Սեբաստացի, Մ. Չամչյան, Գ. Ավետիքյան) կամ որոշիչն ու հատկացուցիչը համարել են նույնական (Ստ. Պալասանյան), վերջիններս «մականուն» ընդհանուր անվամբ տարբերակելով (Մ. Աբեղյան, Ռ. Իշխանյան), հաճախ էլ որպես բացահայտիչ ընդունել երբեմն գոյականով արտահայտված նախադաս որոշիչը (Ստ. Մալխասյանց, Հր. Աճառյան), երբեմն էլ գոյական-որոշչի որոշյալը (Ա.Բագրատունի):
6. Բայական անդամի լրացումների մեջ հաճախ առանձնացրել են խնդիրները՝ ուղիղ և անուղղակի՝ անդրադառնալով դրանց ինչպես տեսությանը (Մ. Չամչյան, Վրթ. Չալըխյան, Ա. Բագրատունի), այնպես էլ ուսուցմանը (Ա. Պողոսյան, Ռ. Փիլիպոսյան)՝ հաճախ դրանք տարբերակելով որպես սեռի և բնության խնդիրներ (Ա.Այտընյան, Հր.Աճառյան, Մ.Ասատրյան, Ռ. Իշխանյան, Ա. Պապոյան, Խ. Բադիկյան):
7. Նախադասության անդամների առնչությամբ հանգամանորեն անդրադարձել են հոլովների կիրառական նշանակություններին կամ շարահյուսական կիրառություններին (Հր. Աճառյան, Գ. Սևակ, Ռ. Իշխանյան, Ա. Պապոյան, Խ. Բադիկյան, Տ. Շահբազյան):
8. Նախադասության երկրորդական անդամները մերթ կապել են գոյականական կամ բայական անդամի հետ ընդհանրապես (Մ. Ասատրյան, Ս. Աբրահամյան, Ռ. Իշխանյան, Ա. Պապոյան, Խ. Բադիկյան, Ֆ. Խլղաթյան, Ս. Գյուլբուդաղյան, Ն. Վիրաբյան), մերթ կոչել են ենթակայի ու ստորոգյալի լրացումներ (մասնավորապես Ստ. Պալասանյան, Ար. Ղարիբյան):
9. Շարահյուսական հարցերին անդրադառնալիս կարևորել են սովորողների ինքնուրույն և ստեղծագործական մտածողության, ինչպես նաև տեսական ընդհանրացումներ, համեմատություններ և հակադրություններ կատարելու ունակությունների զարգացումը, շարահյուսական նյութի գիտակցական յուրացումը (Վ. Չալըխյան, Գ. Էդիլյան, Ար. Ղարիբյան, Տ. Շահբազյան, Թ. Ջուհարյան, Ա. Տեր-Գրիգորյան, Հ. Հարությունյան):
10. Առանձնակի ուշադրություն են հատկացրել պարզ նախադասության քերականական վերլուծության և վերջինիս առնչվող մեթոդական հարցերին (Պ. Դպիր, Ար. Ղարիբյան, Վ. Քոսյան, Ս. Գյուլբուդաղյան), կարևորել են խոսքի և նախադասության (Մ. Աբեղյան, Գ. Սևակ),

ինչպես նաև բառակապակցության և նախադասության զուգադրական ուսուցումը (Վլ. Թումանյան):

11. Խնդրո առարկայի շուրջ խոսել են ինչպես տարրական (Գ. Էդիլյան, Ա. Տեր-Գրիգորյան, Ար. Ղարիբյան), այնպես էլ միջնակարգ կրթության դիտանկյունից (Ար. Ղարիբյան, Տ. Շահբազյան, Ս. Գյուլբուդաղյան, Ֆ. Խլղաթյան):
12. Պարզ նախադասության ուսուցման գործընթացում արժևորել են ինչպես սահմանումների, կանոնների, այնպես էլ վարժությունների, առաջադրանքների, հարցադրումների, դիպուկ օրինակներ պարունակող տեքստի և նախադասությունների, ինչպես նաև լեզվական խաղերի, գծակարգերի, աղյուսակների և իլյուստրացիոն մեթոդի (նկարների ցուցադրման) տեղն ու դերը (Գ. Էդիլյան, Տ. Շահբազյան, Թ. Ջուհարյան, Ա. Տեր-Գրիգորյան):

1.2. *«Հետազոտության մեթոդաբանական հիմնադրությունները»* ենթագլխում տրված են ժամանակակից մանկավարժագիտության մեջ ընդունված այն մոտեցումները, որոնք կարևոր հիմք են հանդիսացել մեր հետազոտության իրականացման համար: Ըստ այդմ՝ հետազոտության թեման կառուցել ենք հետևյալ սկզբունքների վրա՝ տեսության և պրակտիկայի կապի սկզբունք, հիմնախնդրի նկատմամբ ստեղծագործական մոտեցման սկզբունք, հիմնախնդրի մեջ թափանցելու օբյեկտիվության սկզբունք, մանկավարժական գործընթացների և երևույթների համակողմանի ուսումնասիրման սկզբունք, համակարգվածության սկզբունք:

1.3. *«Միջին դպրոցի սովորողների տարիքային առանձնահատկությունների հաշվառման անհրաժեշտությունը պարզ նախադասության ուսուցման ընթացքում»* ենթագլխում տրվում են այն մոտեցումները, որոնք անհրաժեշտ են աշակերտին բազմակողմանիորեն ճանաչելու և ուսուցման գործընթացը լավագույնս կազմակերպելու համար, ինչպես միջին դպրոցականի տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունների բացահայտումն ու դրանց խորը իմացությունը:

Ըստ այդմ՝ ուսուցիչը դեռահասի ուսուցման ու դաստիարակության գործընթացը սկսելիս պետք է ապահովի՝

- ինքնուրույնության ձգտում և հասունության զգացում,
- հայացքների մեջ համոզվածություն,
- անկախության հասնելու նպատակադրում,
- քննադատական մոտեցում ուրիշների և հատկապես ավագների խոսքի, գործի ու կարծիքների նկատմամբ,
- շրջապատի թերությունները նկատելու և վերհանելու կարողություն,
- սկսած գործը մինչև վերջ հասցնելու պատրաստակամություն:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Նախադասության գլխավոր անդամների ուսուցումը միջին դպրոցում»**, ունի երեք ենթագլուխ:

2.1. Ենթագլխում, որը վերնագրված է «Ենթակայի և նրա իմաստի ուսուցումը», ներկայացվում է շարահյուսական միավորների՝ ենթակայի և ստորոգյալի ուսուցումը գեղարվեստական տեքստերի հիման վրա, որոնց ճանաչողական և կրթական արժեքներն ակնհայտ են: Խմբային աշխատանքի ընթացքում շարահյուսական նյութը վերլուծությունների միջոցով ուսուցանելն այլևս բավարար համարվել չի կարող, ուստի այլ մեթոդական հետաքրքիր լուծումներով անդրադարձ է կատարվել լեզվի գրեթե բոլոր մակարդակներին՝ բառագիտությանը, բառակազմությանը, ձևաբանությանը, ոճաբանությանը:

Օրինակ՝ բացատրվում են տեքստի անծանոթ բառերը, ապա կազմվում ընտրված բառերի բառակազմական կաղապարները, առանձնացվում են հոմանիշ ունեցող բառերը, համանուն զույգերը, որոշվում են գլխավոր, նաև երկրորդական անդամների արտահայտությունը, մեկնաբանվում են նախադասության անդամների շարադասությունը, դրանց հուզական - զգացական արժեքը և այլն: Այս կերպ աշակերտներն ընկալում են լեզուն որպես համակարգ՝ որպես մակարդակային միավորների ամբողջություն:

2.2. Ենթագլուխը՝ «Ստորոգյալի և նրա տեսակների ուսուցումը», քերականական-մեթոդական հարուստ նյութ է պարունակում որտեղ հմտորեն գործադրված են համագործակցային ուսուցման ԽԻԿ համակարգում ընդգրկված այնպիսի մեթոդներ, ինչպիսին են մտագրոհը, բազմաբովանդակ հենակետային հարցերի մեթոդը, Վենի դիագրամը, քարտագրումը, նյութի հավաքածուն, Մ-աձև (էմաձև) աղյուսակը, դերային խաղը և այլն: Ուշագրավ են անհատական կամ խմբային այն առաջադրանքները, որոնք աշակերտներին մղում են հետազոտական – որոնողական աշխատանքների. սրանք վերացարկված լեզվամտածողության, հաղորդակցական կարողությունների զարգացման գրավական են:

2.3. Ենթագլխում («Ենթակայի և ստորոգյալի համաձայնության էությունը և նրա ուսուցումը») մատուցվում են ենթակայի և ստորոգյալի համաձայնության օրինաչափությունները, ապա տրվում է թեմայի ուսուցումը: Այն ներկայացվում է **ԽԻԿ համակարգով**՝ հաջորդական քայլերով կիրառելով մի շարք ակտիվացնող մեթոդներ և հնարներ:

Դասի առաջին փուլը՝ խթանման փուլ, սկսում ենք պարզագույն, բայց արդյունավետ մեթոդով, որ կոչվում է **մտագրոհ** կամ **մտքերի տարափ**. սա մի քայլ է նոր նյութի յուրացման ճանապարհին: Մտագրոհին մասնակցում է ողջ դասարանը (աշխատանք կատարվում է նաև խմբերով): Մեթոդի առավելությունները երևում են, երբ դրանք վերլուծվում, մշակվում և կիրառվում են գործնականում:

Մտագրոհի փուլում նախընտրում ենք կիրառել հարցերի ռազմավարությունը. այն հնարավորություն է տալիս թեմայի ներսում բազմակի կապեր ստեղծել և նպաստել նոր թեմայի առավել արդյունավետ յուրացմանը:

Հարցերը պետք է կառուցողական բնույթ ունենան, լինեն բազմաբովանդակ, վերաբերեն նախադասության գլխավոր անդամների իմաստային կողմին, դրանց արտահայտությանը, կապակցելիությանը և այլն: Նպատակը անցածը վերհիշելն ու նոր նյութի հաղորդման համար նախադրյալներ ստեղծելն է: Ինչպես՝

- Ի՞նչ դեր ունի նախադասությունը հաղորդակցման ընթացքում:
- Որո՞նք են նախադասության գլխավոր անդամները:
- Ի՞նչ է բովանդակում ենթական:
- Ի՞նչ իմաստ ունի ստորոգյալը:
- Ի՞նչ հարաբերությամբ են միանում ենթական ու ստորոգյալը:
- Ի՞նչ միջոցներով է իրականացվում ենթակայի և ստորոգյալի կապակցումը:
- Կարո՞ղ է նախադասությունը կազմված լինել միայն գլխավոր (գերադաս) անդամներից. եթե՝ այո՛, ապա ինչպե՞ս է կոչվում այդ նախադասությունը:
- Ինչպիսի՞ն է ենթակայի և ստորոգյալի շարադասությունը:
- Ինչո՞վ է արտահայտվում ենթական:
- Ինչո՞վ է արտահայտվում ստորոգյալը:

Հարցերը վերլուծելուց, պատասխանները, ձևակերպումները լսելուց, ուղղելուց հետո աշակերտներին առաջարկում ենք նախապես ընտրված նախադասություններ (առածներ, թևավոր խոսքեր, բնագրային կամ ինքնուրույն օրինակներ): Հանձնարարում ենք գրատախտակին կամ թղթերի վրա գրառված օրինակներում գունավոր գրիչներով (մարկերներով) ընդգծել նախադասությունների հիմքում ընկած երկու գլխավոր անդամները, ուշադրություն դարձնել դրանց շարադասությանը, արտահայտությանը, նաև դիմային (եթե անձնական դերանունով արտահայտված ենթակա կա) ու թվային համապատասխանությանը:

Սովորողները շարահյուսական վերլուծությունների ճանապարհով պարզում և ներկայացնում են նախադասություններում առկա ենթակաները, ստորոգյալները: Նկատում ենք, որ ենթականերն արտահայտված են տարբեր խոսքի մասերով, կապակցություններով, լեզվական միավորով՝ գոյականով, փոխանվանաբար գործածված ածականով, գոյականական դերանուններով, դասական թվականով, դերբայական դարձվածով, այլև ձայնարկություններով, տառ-հնչյունով:

Ստորոգյալի պարագայում առանձնացնում են պարզ և բաղադրյալ ստորոգյալները, նշում դրանց արտահայտությունը՝ դիմավոր (խոնարհված) բայով արտահայտվածները (չի հարցնում, գնացել է, մնացել է, ունի, չկամ) և բաղադրյալ ստորոգյալի կազմում իբրև ստորոգելի հանդես եկող անվանական բաղադրիչները (առաջնեկն է, գոհ է): Նկատում են բաղադրյալ ստորոգյալների հանգույցի (ստորոգիչի) զեղչումը մի քանի օրինակներում: Ընդգծում ենք զեղչման ոճական նպատակադրումը. հատկապես առածներում՝ ժողովրդախոսակցական երանգ ունեցող երկկազմ նախադասություններում (որտեղ առկա է քերականական համաձայնությունը), ենթակայի, ստորոգյալի (լրիվ կամ մասնակի) զեղչումը խոսքն ազատում է ծանրաբեռնվածությունից, դարձնում է արագընթաց, կարևորությունը տրվում է ստորոգելիի արտահայտած հատկանշային կողմին:

Մտագրոհից հետո՝ խթանման փուլի ավարտին, աշակերտներին առաջարկում ենք նախադասության գլխավոր անդամների

ընդհանրություններն ու տարբերությունները ներկայացնել Վենի դիագրամի միջոցով[1]:

Նոր դասանյութի համար նախադրյալներ ստեղծելուց հետո անցնում ենք ուսուցման ԽԻԿ համակարգի 2-րդ՝ **իմաստի ընկալման փուլին**: Որոշարկում ենք դասի հաջորդական քայլերը:

ԽԻԿ համակարգի վերջին՝ կշռադատման փուլի ընթացքում սովորողները հանրագումարի են բերում նոր գիտելիքները, նորը լիովին ինտեգրում են հնին և յուրացնում, երբ այն արտահայտում են սեփական բառերով, ինքնուրույն օրինակներով:

Կարևորվում են նաև ուսուցման որոնողական-ստեղծագործական կամ փոխներգործման մեթոդները՝ դիտումը, փորձը, գիտափորձը, խմբային հետազոտության մեթոդը, «Խճանկարը», «Ձիկսո» մեթոդը, «Մտագրոհ» ռազմավարությունը, «Խիկ» համակարգը, համագործակցային խմբերով գործնական աշխատանքների կատարումը, «Շրջագայությունը պատկերասրահում», «Վենի դիագրամը», «Դիագրամների բուրգը» մեթոդական հնարները, ստեղծագործական տեսաժապավենը, փորձաքննությունը, ունկնդրումը, սեղմագրումը, վարժությունները, առաջադրանքների կատարումը և պրոբլեմային իրավիճակների լուծումը:

Երրորդ գլուխը (***«Նախադասության երկրորդական անդամներ. նրանց դերը խոսք կառուցելու գործում և ուսուցման առանձնահատկությունները»***) ունի երկու ենթագլուխ:

3.1. Ենթագլխում («Գոյականական անդամի լրացումների ուսուցումը») մատուցվում է որոշչի, հատկացուցչի ու բացահայտչի ուսուցումը:

Ուսուցման գործընթացում, շեշտադրվում են սովորողների որոնողական-հետազոտական աշխատանքները և նրանց ինքնուրույնության խթանումը: Այս գլխում համր բնագրի, տեքստային աշխատանքների կողքին սովորողներին առաջարկվում են նաև խմբագրական, ստեղծագործական բնույթի առաջադրանքներ՝ քերականական գիտելիքների կիրառումով: Կիրառված են «Կարուսել», «Պատկերասրահ» մեթոդները, Տ-աձև աղյուսակները և այլն:

«Որոշիչ» թեմայի ուսուցման ավարտին կարելի է հանձնարարել ստեղծագործական բնույթի տարբեր առաջադրանքներ, որոնց մեջ սովորողը կկիրառի իր անցած քերականական գիտելիքները: Այս դեպքում հանձնարարելի են նկարագրական բնույթի առաջադրանքները, որպեսզի հնարավոր դառնա որոշիչների կիրառությունը: Կարելի է հանձնարարել գրել՝

- գեղարվեստական բնութագիր՝ ընկերոջ (ընկերուհու), սիրած դերասանի (դերասանուհու), ծնողների կամ ցանկացած անձի արտաքինի և բնավորության մասին.
- բնության նկարագրություն.
- քաղաքի (գյուղի) նկարագրություն.
- օրվա որևէ պահի (առավոտ, ցերեկ, մթնշաղ, գիշեր) նկարագրություն.

[1] Վենի դիագրամի նկարագրությունը մանրամասն տե՛ս «Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ» ձեռնարկում, Վանաձոր, 2008, էջ 12:

- սեփական անձի արտաքինի և բնավորության գծերի նկարագիր.
- սիրած կենդանու նկարագրություն.
- որևէ իրի (անձրևանոցի, հագուստի, պայուսակի և այլն) նկարագրություն:

Հատկացուցչի ուսուցումն ավարտելուց հետո կարելի է տալ հետևյալ առաջադրանքները՝

- տեքստը վերաշարադրել սեփական բառերով՝ առանձնացնելով հատկացուցիչ-հատկացյալները.
- տեքստում ավելացնել լրացումներ այնպես, որ ստացվեն տրոհվող հատկացուցիչներ.
- պատմել գանձապահ դարձած երիտասարդի մասին.
- շարունակել պատմությունը, հորինել նոր ավարտ.
- պատմությունը հաղորդել երկխոսություններով.
- պատմությունը շարադրել ուսուցչի անունից.
- պատմությունը շարադրել թագավորի անունից.
- պատմությունը շարադրել իմաստունի անունից:

Բացահայտչի, նրա տեսակների և կետադրության ուսուցման ընթացքում կարելի է հանձնարարել՝

- տրված տեքստում բացահայտիչներից մեկ-երկուսի կողքին ավելացնել կապեր.
- տրված տեքստում ավելացնել սեռական հոլովով դրված բացահայտիչ- բացահայտյալ կապակցություն.
- տրված տեքստում բացահայտիչների կողքին դնել օժանդակ բայ կամ հանգույց՝ արտահայտված հետևյալ բայերով՝ *լինել, դառնալ, համարվել, կոչվել, թվալ*:
- տրված տեքստում բացահայտիչների կողքին ավելացնել սաստկական վերաբերականներ՝ *անգամ, էլ, իսկ, նույնիսկ, ևս:*

3.2. Ենթագլխում («Բայական անդամի լրացումների ուսուցումը») մատուցվում են բայական անդամի լրացումները երկու կտրվածքով՝ խնդիրներ և պարագաներ:

Խնդիր լրացումները ևս տրվում են երկու առումով՝ ուղիղ և անուղղակի խնդիրների կտրվածքով: Մատուցվում են ինչպես ուղիղ խնդիր լրացումները, այնպես էլ ներգործող, հանգման, անջատման, միջոցի և վերաբերության անուղղակի խնդիրները:

Ուղիղ խնդրի մասին ստացած գիտելիքին կիրառական-գործնական բնույթ հաղորդելու համար կարելի է զանազան առաջադրանքներ տալ.

- տրված ներգործական նախադասությունները դարձնել կրավորական.
- տրված կրավորական նախադասությունները դարձնել ներգործական.
- գտնել սխալ խնդրառությամբ կազմված նախադասությունները և ուղղել դրանք.

- տրված *բայ+խնդիր* կապակցությունները կիրառել նախադասությունների և խոսքի մեջ.
- տրված տեքստից ընտրել բայն իր ուղիղ խնդիր լրացումներով և գործածել սեփական խոսքում.
- գրել ակնարկ որևէ թեմայով և ցույց տալ ուղիղ խնդիր լրացումները.
- հորինել հեքիաթ կամ առակ և ցույց տալ ուղիղ խնդիրները և դրանց ձևավորման առանձնահատկությունները:

«Անուղղակի խնդիրներ» թեմայի ուսուցման ավարտին տրվում են տարատեսակ առաջադրանքներ, որոնք նպատակ ունեն զարգացնելու սովորողների՝ կապակցված խոսք կառուցելու, սովորած քերականական գիտելիքները բանավոր և գրավոր կապակցված խոսքում ճիշտ կիրառելու կարողություններ: Կարելի է նշել առաջադրանքների հետևյալ տեսակները.

- նախադասությունների կամ տեքստի մեջ տրված բայերի հետ գործածել միջոցի անուղղակի խնդիրներ՝ *գրել, սղոցել, տաշել, ներկել, տեղափոխել, հրճվել, ուրախանալ.*
- նախադասությունների կամ տեքստի մեջ տրված գոյականները գործածել որպես միջոցի անուղղակի խնդիրներ՝ *փոշեծծիչ, հեռուստացույց, խոզանակ, օդանավ, ուռկան, մուրճ, հարիչ.*
- գրավոր պատմել մեկ օրվա տնային գործերի մասին.
- գրել շարադրություն «Կայարանում», «Օդանավակայանում», «Դպրոցի ճաշարանում» թեմաներով՝ գործածելով միջոցի անուղղակի խնդիրներ.
- տրված տեքստը հարստացնել վերաբերության անուղղակի խնդիր լրացումներով.
- տրված բառակապակցությունները գործածել տեքստի մեջ.
- գեղարվեստական գրականությունից դուրս գրել խնդիրներ ունեցող նախադասություններ և հնարավորության դեպքում փոփոխել դրանք, այսինքն՝ գտնել շարահյուսական հոմանիշները.
- կատարել թեստային և հարցարանային առաջադրանքներ:

Պարագաները մատուցվում են տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի, պայմանի, նպատակի, պատճառի, հիմունքի և զիջման տեսակներով:

Երբ սովորողները յուրացրել են պարագա լրացումները, կարելի է անցնել այլ առաջադրանքների: Ահա դրանց հակիրճ թվարկումը.

- հոլովված բառերով և կապով ձևավորված բառակապակցությունները գործածել նախադասությունների մեջ.
- տալ նախադասություններ, առաջարկել, որ դրանք վերափոխեն՝ դարձնելով զիջման պարագա ունեցող նախադասություններ.
- տալ տեքստ, առաջարկել հարստացնել զիջման պարագաներով:

Խնդիր և պարագա լրացումները համեմատված են տեքստի հիման վրա կազմված աղյուսակներով, որտեղ հանդիպադրումով նշվում են վերջիններիս իմաստային – քերականական տարբերությունները:

Ատենախոսության չորրորդ գլուխը (***«Պարզ նախադասության շարադասության և հնչերանգային առանձնահատկությունների ուսուցումը որպես խոսքի զարգացման միջոց»***) բաղկացած է երեք ենթագլխից:

4.1. Ենթագլխում («Պարզ նախադասության շարադասության ուսուցումը») տրվում է պարզ նախադասության ուղիղ և շրջուն շարադասական տարբերակների ուսուցումը: Ուղիղ և շրջուն շարադասության ուսուցումը կարևորվել է ոչ միայն խոսք կառուցելու, նախադասության անդամների կետադրությունն ընկալելու, յուրացնելու առումով, այլև լեզվաոճական – պատկերային և արտահայտչականության տեսանկյունից:

4.2. Ենթագլխում («Ըստ երանգի նախադասությունների ուսուցումը») ներկայացված է նախադասությունների բնորոշ հնչերանգային հատկանիշների, դրանց ձևավորման սկզբունքների ուսուցումը, կետադրությունն ու ոճական նշանակությունը, կարևորվում է որոշակի կարողությունների ձևավորումը, հատկապես «Ճիշտ հնչերանգով կարդալու կարողության զարգացումը»:

Ըստ հնչերանգի նախադասությունների յուրացումն ապահովելու համար ուսուցիչը տալիս է ինքնուրույն առաջադրանքներ, ինչպես՝

- կետադրել համր բնագիրը.
- տրված տեքստը հարստացնել ձայնարկություններով և եղանակավորող բառերով.
- տրված պատմողական տեքստը հաղորդել երկխոսությամբ.
- տրված տեքստում հարցական նախադասությունները դարձնել բացականչական և հակառակը:
    - գեղարվեստական գրականությունից դուրս գրել հրամայական նախադասություններ.
    - տեքստը հարստացնել երկխոսություններով և հրամայական նախադասություններով.
    - տրված հրահանգին համապատասխան նախադասություններ կազմել.
    - կարդացած պատմվածքի մի հատվածը (օրինակ Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակը») բանավոր և գրավոր վերարտադրել երկխոսություններով:

4.3. Ենթագլուխը վերաբերում է պարզ նախադասության ուսուցման մեթոդական համակարգի գիտափորձի հիմնավորմանը:

Պարզ նախադասության ուսուցման դինամիկ, փոխներգործուն կաղապարը ենթադրում է քերականական նյութի ներմուծման և յուրացման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, որը հիմնավորվում է հետևյալ սկզբունքներով.

1. լեզվաքերականական նյութն ընտրել և ներմուծել ըստ նրա հաղորդակցական նշանակության,
2. շեշտը դնել հայերենի ժամանակակից խոսակցական լեզվակաղապարների միջոցով քերականության ուսուցման վրա,
3. պարզ նախադասության հիմնական հայեցակետերը ներկայացնել համալիր ձևով,
4. բացահայտել հոմանիշության տարբեր դրսևորումները համապատասխան փոխակերպումների միջոցով,

5. իրականացնել նախադասության գլխավոր և երկրորդական անդամների ուսուցումը խոսքային և իրադրային վարժություններով,

6. դժվարություն ներկայացնող քերականական նյութի յուրացումն ամրապնդել տարբեր բնույթի բնագրերի ուսումնասիրությամբ, որոնք ընտրվում են ըստ քերականական նյութի դժվարության հաղթահարման սկզբունքի,

7. քերականական նյութը ներմուծել ըստ զննականության, մատչելիության, գիտակցականության սկզբունքների՝ կիրառելով ուսուցման գործընթացում տարբեր բնույթի պատկերներ, պաստառներ, հեռահաղորդակցական միջոցներ,

8. շրջանառվող դասագրքերում նախապատվություն տալ ժամանակակից պարզ նախադասություններով հարուստ բնագրերին,

9. պարզ նախադասության ուսուցման ընթացքում ներառել տարբեր ոճական հնարներ պարունակող բնագրեր, հատվածներ այդ բնագրերից, որոնք նպաստում են համապատասխան քերականական լեզվակաղապարների, բառային միավորների յուրացմանը:

Այսպիսով, պարզ նախադասության ուսուցման կաղապարի հիմքում ընկած են նախ և առաջ աշակերտների ճանաչողական դրդապատճառները և պահանջմունքները: Երկրորդ՝ պարզ նախադասության ուսուցումը ենթադրում է հաղորդակցական ուղղվածություն, բնագրերի ընտրություն:

Պարզ նախադասության ուսուցման մեթոդական համակարգը հիմնավորվել է գիտափորձով: Գիտափորձի ընթացքում առաջարկվող վարժությունների համակարգի արդյունավետությունը փորձարկվել է Վանաձորի թիվ 1, 2, 6, 18, 19, 22 դպրոցներում:

Փորձարարական խմբի մեջ ներգրավված են 8-րդ դասարանի 59 աշակերտ: Ստուգողական խմբերում ներգրավված են եղել 62 աշակերտ: Գիտափորձի առաջին փուլում որոշվել է աշակերտների կողմից պարզ նախադասության տեսակների, սահմանման, վերլուծելու գիտելիքները ինչպես փորձարարական, այնպես էլ ստուգողական խմբերում: Աշակերտների գիտելիքները ստուգվել են հետևյալ չափանիշներով.

1. ճանաչել պարզ նախադասությունը տրված բնագրում,
2. կազմել պարզ նախադասություններ ըստ օրինակի,
3. վերլուծել նշված բնագիրը կամ հատվածը՝ հաշվի առնելով նրանում տեղ գտած պարզ նախադասության շարահյուսական, հնչերանգային առանձնահատկությունները,
4. մենախոսել՝ խոսքի մեջ գործածելով ըստ օրինակի պարզ նախադասություններ,
5. երկխոսել՝ խոսքի մեջ գործածելով ըստ օրինակի պարզ նախադասություններ,
6. ուղղել դասընկերների խոսքի մեջ առկա սխալ խնդրառությունը,
7. ուղղել դասընկերների խոսքի մեջ առկա տրամաբանական սխալ կառուցվածքը,
8. ուղղել դասընկերների խոսքի մեջ առկա նախադասության անդամների սխալ շարադասությունը,
9. ուղղել դասընկերների խոսքի մեջ առկա տրոհվող անդամների ոչ ճիշտ կետադրությունն ու դրանց արտաբերական հնչերանգային սխալները,

10. առաջարկել տրված պարզ նախադասությանը համարժեք հոմանիշ նախադասություններ, կաղապարույթներ, բառակապակցություններ:

Աշխատանքի վերջում տրված է «Պարզ նախադասությունների ուսուցման վարժությունների համակարգը», որ ներառում է տարաբնույթ հանձնարարականներ, որոնք միտված են պարզ նախադասության և նրա բաղադրիչների համակողմանի և խորը յուրացմանը: Այդ հանձնարարականների (վարժությունների համակարգի) մեջ մենք կարևորում ենք փոխակերպական, տեղադրման, ընդլայնման և շարադասական բնույթի վարժությունների տեսակները: Վարժությունները տրված են պարզից բարդը, ծանոթից անծանոթն ընթացող, ինչպես նաև մատչելիության սկզբունքներով: Դրանք քաղված են հայ դասական գրականությունից, արվեստի և պատմության նշանավոր հուշարձաններից և ունեն ընդգծված կրթադաստիարակչական ու մշակութաբանական նշանակություն:

Մեր հետազոտության արդյունքները թույլ են տալիս կատարելու հետևյալ **եզրակացությունները.**

1. Հետազոտության թեմայի ուսուցման արդյունավետությունն ապահովելու համար ուսումնասիրվում են կրտսեր և հիմնական դպրոցի սաների տարիքային առանձնահատկությունները, որոշվում են աշխատանքի բովանդակության սահմանները, ինչպես նաև գործունեության եղանակներն ու ձևերը:
2. Կրտսեր և հիմնական դպրոցում հայոց (մայրենի) լեզվի ուսուցման գործընթացում լեզվաբանության և մանկավարժագիտության ձեռքբերումների, ինչպես նաև պետական փաստաթղթերով ներկայացվող պահանջների հիման վրա մշակված գիտական մոտեցումները հիմք են տալիս ապահովելու ուսումնառության բարենպաստ միջավայր, որը խթանում է սովորողների կարողությունների և կապակցված խոսքի զարգացումը:
3. Հետազոտության առաջին գլխի քննությունը ցույց է տալիս լեզվաբանական գրականության մեջ «պարզ նախադասություն» հասկացության ըմբռնումները, քերականագետների արտահայտած կարծիքները դրա շուրջ, ինչպես նաև այդ գաղափարների կիրառելիությունը հայոց լեզվի՝ արդի ուսուցման բնագավառում:
4. Պետական փաստաթղթերով ներկայացվող պահանջները հայոց լեզվի, տվյալ դեպքում՝ պարզ նախադասության ուսուցման գործընթացում նախատեսում են դասավանդման նոր և ժամանակակից մեթոդների, եղանակների, հնարների կիրառություն:
5. Ուսուցման ակտիվ մեթոդների կիրառությունն ապահովում է սովորողների գործուն մասնակցությունը լեզվաքերականական նյութի՝ պարզ նախադասության ուսուցման գործընթացին:
6. Պարզ նախադասության ուսուցման գործընթացում դասավանդման ակտիվ մեթոդների կիրառության դեպքում զարգանում են սովորողների լեզվամտածողությունը, ստեղծագործական կարողությունները և կապակցված խոսքը:
7. Նախադասության գլխավոր անդամների ուսուցման գործընթացը, հենվելով ավանդական սկզբունքների վրա, միաժամանակ կարիք ունի

նորովի մոտենալու և հաշվի առնելու դասավանդման առջև դրված նորագույն պահանջները, այն է՝ տեքստը, դրա ուսումնասիրությունը ծառայեցվում են քերականական նյութի ուսուցմանը:

8. Նախադասության երկրորդական անդամների ուսուցման գործընթացում շեշտադրվում են սովորողների որոնողական-հետազոտական աշխատանքը և նրանց ինքնուրույնության խթանումը:

9. Պարզ նախադասության շարադասության և հնչերանգային ավարտվածության ուսուցումը համատեղվում են խոսքի համապատասխան վերլուծությունների, գրավոր և էլեկտրոնային զանազան աղբյուրներից օգտվելու, նախադասության հաղորդակցական կողմի մասին գիտելիքը, ընկալումը, կիրառությունը ապահովելու կարողությունների ներդաշնակ զարգացման վրա:

10. Քերականական նյութի, տվյալ դեպքում՝ պարզ նախադասության ուսուցումը հետապնդում է կարևորագույն նպատակ՝ սովորողների բանավոր և գրավոր խոսքի զարգացումը, որը իրականանում է սովորողների գործուն մասնակցության ապահովման ճանապարհով:

11. Պարզ նախադասության ուսուցման գործընթացում ստեղծվում են պայմաններ իրադրական խոսքի տարբեր ոճերի դրսևորման համար՝ ապահովելով սովորողների ճանաչողական, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական կարողությունների ձևավորումը, զարգացումը և ամրապնդումը:

12. Պարզ նախադասության ուսուցման առաջարկվող համակարգը դառնում է ելակետ՝ սովորողների բանավոր և գրավոր կապակցված խոսքի զարգացման՝ ինքնուրույն շարադրանքներ ստեղծելու, ըստ իրադրության խոսք կառուցելու կարողությունների զարգացման և ամրապնդման համար:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլվել են ատենախոսի հետևյալ աշխատանքներում.

1. Ըստ երանգի նախադասությունների ուսուցման բառական և քերականական միջոցները միջին դպրոցում, «Մանկավարժական միտք», Տաթև գիտակրթական համալիր, N 3-4, Ե., 2009, էջ 154-160:
2. Պարզ նախադասության շարադասության ուսուցումը որպես խոսքի զարգացման միջոց, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, N 4, Ե., 2009, էջ 111-114:
3. Ենթակայի և ստորոգյալի համաձայնության ուսուցումը որպես կապակցված խոսքի զարգացման միջոց, Գիտական աշխատություններ, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, N XII, Գյումրի, 2009, էջ 147-153:
4. Անուղղակի խնդիրները և նրանց ուսուցումը, ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», N 1 (15), Ե., 2011, էջ 17-28:

ТАТЕВИК АРМЕНОВНА МАРАБЯН

ПРОБЛЕМЫ ОБУЧЕНИЯ ПРОСТОМУ ПРЕДЛОЖЕНИЮ В ОСНОВНОЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - “Методика преподавания и воспитания” (армянский язык).

Защита диссертации состоится 14.03.2013г. в 14^{00} на заседании специализированного совета “Педагогика” 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 375010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Требования общеобразовательной трехступенчатой системы относятся к обучению языку вообще, включающему все структурные элементы и все компоненты языкового уровня. Обучение языку преследует определенные цели, развивая общее представление учащихся о его структуре и норме, а также способствуя применению практических знаний письменной и устной речи, и, в целом, формированию коммуникативных способностей.

Предложение является коммуникативной единицей, которое рассматривается как смысловая единица синтаксического уровня, как полноценный языковой знак. Следовательно, обучение простому предложению является практической основой связной речи учащихся, которое предполагает всестороннее изучение структуры предложения, его основных элементов и их взаимоотношений.

Важность проблемы подчеркивается тем, что учащиеся в общественной жизни очень часто сталкиваются с языковыми ошибками и нарушениями языковых правил, которые распространяются по различным каналам масс-медиа. Можно выделить несогласованность членов предложений, синезис или согласование по смыслу, управление, логически неправильную структуру речи, неправильный порядок членов предложения, неправильную пунктуацию обособленных членов, артикуляционные, интонационные ошибки и т.д.

Всестороннее изучение языковых и грамматических закономерностей простого предложения позволяет учащимся выработать правильную речь, исправлять типичные ошибки и языковые отклонения.

Целью исследования является выявление и определение основных способов и методов обучения для формирования и развития связной речи учащихся.

Научная новизна исследования

а) разработаны более продуктивные средства и формы решения исследуемой проблемы на основании современных методов обучения, применение которых создаст благоприятную почву для улучшения процесса обучения связной речи в школе.

б) разработаны методы и приемы применения теоретических знаний в практике, способствующие активизации процесса обучения армянскому языку, развитию языкового мышления учащихся,

в) определена и обоснована система формирования и развития коммуникативных умений и ситуативной речи в процессе обучения языковому и грамматическому материалу.

г) разработана методическая система обогащения письменной и устной речи в процессе обучения языковому и грамматическому материалу.

Теоретическое значение

а) отобраны и систематизированы принципы изучения темы „Простое предложение" с точки зрения развития собственной речи и стиля,

б) определены и обобщены формы и методы развития языкового мышления учащихся посредством применения активных методов обучения,

в) разработана методическая система развития письменной и устной речи, отправной точкой которой является развитие творческих умений и самостоятельности учащихся.

Практическое значение исследования.

а) разработана и апробирована методическая система, которая обеспечит включение учеников, имеющих разные языковые и мыслительные качества и уровни, в процесс изучения языкового и грамматического материала;

б) разработана и апробирована методическая система работы по обучению языковому и грамматическому материалу согласно современным лингвистическим и педагогическим принципам;

в) разработана и применена новая система упражнений и заданий по теме „Простое предложение", нацеленная на активизацию мыслительно-творческих механизмов учащихся, языкового чувства, самостоятельного создания связной речи;

г) данное исследование может способствовать составлению школьных учебников по синтаксису и практических пособий, а также разработке тестов по проверке знаний.

Апробация результатов исследования.

Основные положения результатов исследования обсуждались на заседании кафедры армянского языка и методики его преподавания и кафедры общей педагогики в АГПУ им. Х. Абовяна. В результате тестирования, проведенного на филологическом факультете АГПУ им. Х. Абовяна, получены данные об особенностях применения предложенной модели, которые были учтены при разработке методической системы на разных этапах обучения грамматике армянского языка. Материалы исследования внедрены в практику преподавания армянского языка в общеобразовательной школе РА.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений.

По теме диссертации опубликовано четыре научных статьи.

MARABYAN TATEVIK ARMEN

THE PROBLEMS OF TEACHING SIMPLE SENTENCE IN BASIC SCHOOL

Thesis for getting a candidate degree in Pedagogical Sciences, specialty 13.00.02 - "Teaching and education methodology" (the Armenian language).

The thesis defense will be held on 14 of March, 2013 at 14^{00} at the meeting of the Specialized Pedagogical Committee 020 HAC for granting scientific degrees at Armenian State Pedagogic University after Kh. Abovyan (address: 375010, st. Tigran Mets 17, Yerevan).

SUMMARY

The relevance of the research. The requirements of three-dimensional system of general educational system refer to teaching language in general, which includes all the structural elements and all the components of language level. Thus, teaching language pursues certain objectives: it gives students not only a general idea about its structure and norms but also contributes to the development of abilities of using practical knowledge, both in written and in oral speech in general and the formation of communicative skills. The sentence is considered to be a communicative unit, which is regarded as a semantic unit at the syntactic level, as a complete linguistic sign. Therefore, teaching the simple sentence is the practical basis of pupil's coherent speech, which involves a comprehensive study of its /sentence / structure, the basic elements and their relationships.

The importance of the research is emphasized by the fact that students in public life often face language errors and violations of language rules, which are distributed through various channels of mass media. In total, you can underline an inconsistency of the sentence, sinesis or agreement on the meaning, government, logically incorrect structure of speech, incorrect order of the sentence, incorrect punctuation of isolated members and their articulation, intonation errors, etc.

A thorough study of linguistic and grammatical patterns of simple sentences allow students to generate not only correct speech, but also to correct common language errors.

The aim of the research is to determine and define the main ways of forming and developing of students' coherent speech in the process of using active methods.

Content of research is reflected in the structure of the dissertation, which consists of 4 chapters, introduction, conclusion, bibliography and appendices.

Scientific novelty of the research:

a) a more productive strategies and ways of solving the problem under investigation are developed based on modern teaching methods, the use of which provide fertile ground for improving the process of teaching coherent speech in school.

b) The methods and techniques of applying theoretical knowledge in practice are worked out, which contribute to enhancing the process of teaching Armenian language, the development of students' language thinking,

c) The system of formation and development of communication skills and situational language teaching learning in the process of teaching language and grammatical material is defined and substantiated.

d) The methodological system for enrichment of written and spoken language is developed to develop coherent speech in the process of teaching language and grammatical material.

The theoretical importance of the research.

a) the principles of studying the topic "simple sentence" are selected and systematised in order to develop the students' own speech and style, B) the forms and methods of developing students' language thinking are defined and generalised through the use of active teaching methods,

b) methodological system of writing and speaking, the starting point is to develop creative skills and self-learners:

The practical importance of the research.

a) was developed and tested methodological system that will ensure the inclusion of pupils with different language and intellectual capacity and quality levels in the process of acquiring the linguistic and grammatical material

b) was developed and tested methodological system of training of linguistic and grammatical material, according to current linguistic and pedagogical principles

c) developed and implemented a new system of exercises and activities on the theme "simple sentence", aimed at enhancing intellectual and creative arrangements of students, linguistic sense, self-generation of connected speech

d) this study may contribute to the work of compiling textbooks on syntax and practical benefits as well as it could be the basis of a test to check knowledge.

Exploration of research results.

The main points of the research were discussed at the chairs of the Armenian language and its teaching methodology and general pedagogy of ASPU after Kh. Abovyan. As a result of testing carried out at the faculty of philology ASPU after Kh. Abovyan, are obtained data about the features of simple sentence taught in school.

The research materials are put into practice of teaching Armenian in secondary school.

Content of the research is reflected in the structure of the dissertation, which consists of three chapters: introduction, conclusion, bibliography and appendices.

On the topic of the thesis were published four scientific articles.